Ժ Ա.

Երեսդ ի խանզար նմանակ, ի խոնչին մէջըն շինած է.
Ուներդ ի կեռաս նըման 'ւ ի խոնչին մէջըն շարած է.
Աւա՜ղ ու հազար բերան, տէր չունիս որ ըզքեզ աժէ,
Օմրիկդ է սեւով անցեր, ժամանկիկդ՝ որ մարդ չիգիտէ:

ՔՍԱՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Իմ եարս է հագեր քըթան, երդիցովն եկեր սուտ ի բան.
Գիտեմ թէ ի բան եկեր, նա եկեր հովուս հոգեհան.
–Ձեր տունն ի բանէ եկի, զքեզ տեսայ՝ զբանըս մոռացայ,
Ոտկունքս ո՛չ ի յետ կ'երթայ ՛ւ ո՛չ յառաջ, սերկերտան եղայ:
Ես քեզ հազա՛ր ծառայ, ի՞նչ արիր որ հընցկուն եղայ.
Շատոնց սիրոյ տէր էի, թ'ի՞նչ դըժար էր այս տըրպայ:

Բ.

Մեռնի՜մ քո չարին փոխան, հանց հաշուեմ թէ մարն չէ բերեր.
Ով քեզի ծանօթ եղեր՝ արեւուն ըզթարկն է տըւեր:
Ինձ կուճ, ա՜մ, է՞ր կ'անեմ, յերկընո՛ւցըն գէմ չես իջեր.
Հազար մարդ վըկայ ունիմ, հողեղէն մարն է զքեզ բերեր:

ՔՍԱՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Դարձաւ ու ճուղապ երետ թէ՝ Հերի՛ք էպլէի զըրուցես,
Տարի մ'է ու չորս ամիս՝ կու սիրեմ, դու նո՞ր մի գիտես.
Ձագուկն առիւծուն եմ ես, զով սիրեմ՝ ի հուն հանեմ ես.
Արե՛կ որ զքեզ այլ սիրեմ ու տանիմ այլ աշխարհ ի ներս:
Չարկամն որ ի գալ տեսնում, քո արե՛ւն որ լաւ ջանում ես.
Ձարիւնս ի վերայ թափեմ, թո՛ւխ աչեր, դու կանգնէ՞ ու տե՛ս:

Բ.

Քո տունն ի յանտառ մորին եւ քո դուռն ի դէմ դիժարին:
Քո բերդն ի զէնճիլ նըման, ու հազար մըսալ զէնճիլին.
Ըզթեւն արծըւին առնում գամ մըտնում ի մէջ զէնճիլին.
Ձճիկարն առիւծուն առնում, գամ մըտնում ի մէջ քո բերդին,